

Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{\left(1 + i\right)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝  $i$  – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ Օրենքի վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք վարկառուն պարտավոր է վճարել վարկավորման համար:

$A$  – վարկի ձևակերպման պահին վարկառուին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

$n$  – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե վարկառուի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ) քանի վճար է իրականացվել:

$N$  – վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի թիվն է, որից հետո վարկառուի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

$K_n$  - այն գումարն է, որը ցույց է տալիս վարկառուի կողմից վարկի ստացման պահին և վարկի գործողության ընթացքում հերթական՝  $n$ -րդ վճար(ներ)ի (մայր գումարի, տոկոսագումարների և վարկային պայմանագրի գործողության ընթացքում կատարվող բոլոր այլ վճարումների) գումարները:

$D_n$  – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման (պայմանագրի կնքման) օրից մինչև վարկի գումարի հերթական՝  $n$ -րդ մարման օրը ներառյալ, ընդ որում՝ վարկի ստացման օրը չի ներառվում հաշվարկում:

Օրինակ.

Եթե հաճախորդը դիմել է 2 մլն ՀՀ դրամ գումարով, 24% անվանական տարեկան տոկոսադրույքով, 12 ամիս մարման ժամկետով սպառողական վարկի համար, ապա վարկի տրամադրման պահին հաճախորդը կվճարի.

➤ 20,000 ՀՀ դրամ կոմիսիոն վճար,

Այս դեպքում վարկ տարեկան փաստացի տոկոսադրույքը համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքում ներկայացված բանաձևի կկազմի մոտ 29.3%: